

Լ. Խոչստյան

ՓԻԼՈՍԻՒՅՑ



Խոչստյան
հուշարձնից թուղթը

1934

891715

S-80

2011-05

891.7145
S-80


L. SULUSUNA

Փ Ի Լ Ո Ս Ի Կ Ր

1004
31334

3613

Թարգմ. Խնկոս Ազգեր



ՓԻԼՈՍԻԿԸ

Կար մի մանուկ, անունը Փիլոսիկ։
Մի անգամ բոլոր յերեխաները դպրոց
գնացին։ Փիլոսիկը վերցրեց գլխարկը և
ուղում եր ինքն ել գնար Մայրն ասաց
նրան։

— Եղ ո՞ւր ես պատրաստվում, Փիլոսիկ։
— Դպրոց։
— Դու դեռ փոքրիկ ես, մի գնա, — ու
մայրը թողեց նրան տանը։

Յերեխաները գնացին դպրոց։ Հայրը
դեռ առավոտյան անտառ գնաց, իսկ մայրն
որավարձու աշխատանքի։ Խըճիթում մնացին Փիլոսիկն ու տատը։ Փիլոսիկն սկսեց
ձանձրանալ, տատը քնեց։ Նա վնտեց
գլխարկը, իրենը չգտավ, վերցրեց հոր
հին գլխարկն ու գնաց դպրոց։

Դպրոցը գտնվում եր գյուղից դուրս,
յեկեղեցու մոտ։

Յերբ Փիլոսիկն իրենց թաղով եր գնում,


Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան

Մբարգիր՝ Հ. Մանավագյան
Նկարները Լ. Կուզնեցովի

Գլավլիս № 8631, հրատարակություն № 3064, պատվեր № 1163,
տիբաժ 5000։ Հանձնված և արտադրության 9 հուլիսի 1934 թ.
ստորագրված և տպելու 4 ոգոսառուի 1934 թ.

Պետհրատի տպարան Յերևան 1934 թ.

շները նրան չդիպան, նրանք ճանաչում
եյին Փիլոսիկին: Բայց յերբ զնաց ոտար
դռներով, դուրս թռավ Զաղարիկը, հաշեց,
իսկ Զաղարիկի հետևից մեծ Գայլիկ շունը:



Փիլոսիկը թողեց ու փախավ, շները հե-
տևից ընկան: Փիլոսիկն սկսեց բզավել,
սայթաքեց ու ընկավ: Դուրս յեկավ մի
գյուղացի, քշեց շներին և ասաց:

— Եղ ո՞ւր ես, եղակես մենակ վազում:
Փիլոսիկը վոչինչ չասաց, հավաքեց վե-

շերն ու վազեց ինչքան կարող եր: Վա-
զեց... յեկավ ու հասավ դպրոց: Պատշզամ-
բում վոչվոք չկար, իսկ դպրոցում լսվում
եր յերեխաների ղժվժոցը: Յերկյուղն առավ
Փիլոսիկին:

— Վայ թե ուսուցիչն ինձ վոնդի՞
Յեվ սկսեց մտածել, թե ինչ անի՞
Հետ զնա, — շունն իրեն կուտի, դպրոց
զնա, — ուսուցչից ե վախենում:

Դպրոցի մոտով դույլը ձեռքին գնում ե
մի կին և ասում ե.

— Բոլորը սովորում են, ինկ դու ի՞նչ
ես այստեղ կանգնել:

Փիլոսիկը զնաց դպրոց:
Դպրոցի սրահում հանեց գլխարկը և
դուռը բաց արեց:

Դպրոցը լիքն եր յերեխաներով: Ամեն
մեկն իրենն եր ասում. և ուսուցիչն ել
կարմիր շարֆը զցած ման եր գալիս մեջ-
տեղը:

Դու ի՞նչ ես ուզում, — բղավեց ուսու-
ցիչը Փիլոսիկի վրա:

Փիլոսիկը բռնեց գլխարկը և վոչինչ չեր
ասում:

— Ո՞վ ես դու...

Փիլոսիկը լուռ եր:

— Զլինի՞ դու համբ ես:

Փիլոսիկն ենպես վախեցավ, վոր խոսել չկարողացավ:

— Ե, ուրեմն գնա տուն, յեթե խոսել չես ուզում:

Իսկ Փիլոսիկն ուրախ եր մի բան ասելու, բայց յերկյուղից չորացել եր կոկորդը: Նա նայեց ուսուցիչն և լաց յեղավ: Այն ժամանակ ուսուցիչը խղճաց նրան: Նա շոյեց Փիլոսիկի գլուխը և յերեխաներին հարցրեց, թե ո՞վ ե այս տղան:

— Այդ Փիլոսիկն ե, Կոստիկի յեղբայրն ե, նա վազուց ե ուզում գալ զպրոց, բայց մայրը չի թողնուե: Նա ծածուկ ե յեկել զպրոց:

— Դե, նստիր այլտեղ յեղբորդ մոտ, յես մորդ կխնդրեմ, վոր նա թույլ տա քեզ զպրոց գալու:

Ուսուցիչն սկսեց ցույց տալ Փիլոսիկին տառերը, բայց Փիլոսիկն արդեն տառերը ճանաչում եր և մի քիչ ել կարդալ գիտեր:

— Դեհ, մի անունդ գիրկապ արա:

Փիլոսիկն ասաց.

— Փյուր-ինի, իիի, լյուն-ո, յո, սե-ինի-կեն-սիկ, Փիլոսիկ:


Բոլորը ծիծաղեցին:

— Կեցցես, — ասաց ուսուցիչը: Ո՞վ եք կարդալ սովորեցրել:

Փիլոսիկը սիրտ առավ և ասաց.

— Կոստիկը: Յես շատ զալումն եմ, յես միանգամից ամեն ինչ հասկացա: Ասել չի լինի, թե յես ինչ ճարպիկն եմ:

Փիլոսիկն այն որվանից յերեխաների հետ միասին սկսեց դպրոց հաճախել:



ՅԵՐԵՔ ՓՈՒՌՆԻԹ ՅԵՎ ՄԻ ԲՈՔՈՆ


Մի գյուղացի ուտել եր ուզում, Նա գնեց մի փուռնիթ և կերավ. Ելի յեր ուզում ուտելք: Նա գնեց մի փուռնիթ ել և կերավ: Ելի յեր ուզում: Նա գնեց յերբորդ փուռնիթը և կերավ: Ելի յեր ուզում: Հետո նա գնեց մի բոքոն և յերբ բոքոնը կերավ, արդեն կշտացավ: Այն ժամանակ գյուղացին խփեց իր գլխին և ասաց.

— Եսպես ել հիմար, յես ինչու իզուր տեղը եղքան փուռնիթ կերա: Լավ կլիներ առաջուց մի բոքոն ուտեյի:

ԾԵՐ ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ

Պապը շատ ծերացել եր: Նրա վոտները չեյին շարժվում, աչքերը չեյին տեսնում, ականջները չեյին լսում, բերանում ատամ չկար: Չեռքերը դողդողում եյին: Ճաշ ու տելիս կերակուրը կաթ-կաթում եր գդալից: Վորդին և հարսն ել սեղան չնստեցրին նրան, այլ ճաշ եյին տալիս մի անկյունում: Մի անգամ կավե ամանով ճաշ տվին նրան: Ծերունին ուզեց բարձրացնել ամանը, բայց վայր գցեց ու ջարդեց: + Հարսն սկսեց վիրավորել ծերուկին, վոր նա ամեն ինչը փչացնում ե, և ամաններն ե ջարդում: ասաց, վոր սրանից հետո նրան փայտե ամանով ե ճաշ տալու: Ծերուկը միայն ծանր հառաչեց և ել վոչինչ չասաց:

Մի անգամ մարդ ու կին նստել են տանը և նայում են-իրենց փոքրիկը հատակի վրա տաշեղների հետ խաղում ե և



մի ինչ վոր բան ե շինում:
Հայրը հարցըց:

— Եղ ի՞նչ ես շինում Մուքո:
Մուքոն ել ասում ե.

— Եղ յես, հայրիկ, վաստե աման եմ
շինում։ Յերբ դու և մայրիկը ծերանաք,
նրանով ձեզ կկերակրեմ։

Մարդ ու կին իրար նայեցին և լաց
յեղան։ Նրանք ամաչեցին, վոր ծերունուն
վիրավորել են և այն ժամանակվանից
հետո սկսեցին նրան իրենց հետ սեղան
նստեցնել և խնամել ծերուկին։



ՀՀ Ազգային գրադարան



NL0391497

5448

ԳՐԱԾ 15 ԿՈՊ.

Л ТОЛСТОЙ
ФИЛИПОК
Гиз. ССР Армении